ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
24.01.2012
Թողարկվել են 6 նոր հուշադրամներ

“Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակ” (ոսկի)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր ոսկե հուշադրամ՝ նվիրված Սայաթ-Նովայի (1712–1795 թթ.) ծննդյան 300-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է նուռ, որը խորհրդանշում է ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի՝ Սայաթ-Նովային նվիրված «Նռան գույնը» հայտնի կինոնկարը: Նռան ֆոնին պատկերված են քամանչա, գիրք և փետրագրիչ: Քամանչայից աջ մակագրված է հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2012», իսկ ձախ մասում՝ հայկական զարդանախշ է: Վերևի ձախ անկյունում անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ DRAM», իսկ շրջագծով՝ «CENTRAL BANK OF ARMENIA» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին Սայաթ-Նովայի դիմաքանդակն է, որից վերև զարդանախշ է, աջ մասում, ուղղահայց՝ «300 ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» մակագրությունն է:

Հուշադրամի հեղինակն է Տիգրան Չոբանյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը.

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900^0
Զանգվածը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	1000 հատ

«Շուշիի ազատագրման 20-ամյակ» (ոսկի)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր ոսկե հուշադրամ՝ նվիրված Շուշիի ազատագրման 20-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին հավերժության նշանի ֆոնի վրա պատկերված է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքն է՝ «10000 դրամ», իսկ եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը և թողարկման տարեթիվը՝ «2012»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են «Ոսկե արծիվ» շքանշանը, որը շնորհվում է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանն արժանացած անձանց և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինանշանը: Եզրագծով՝ «ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Հուշադրամի հեղինակն է Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը.

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900^0
Զանգվածը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

«Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ» (ոսկի)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր ոսկե հուշադրամ՝ նվիրված հայոց բանակի կազմավորման 20-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «10000 դրամ», իսկ եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը և թողարկման տարեթիվը՝ «2012»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինանշանը և «Հայրենիք» շքանշանը, որը շնորհվում է «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչման արժանացած անձանց: Եզրագծով՝ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Հուշադրամի հեղինակն է Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը.

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը և հարգը	ոսկի, 900^0
Զանգվածը	8,6 գ
Տրամագիծը	22,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

«Հայոց բանակի կազմավորման 20-ամյակ» (արծաթ)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր արծաթե հուշադրամ՝ նվիրված հայոց բանակի կազմավորման 20-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ», իսկ եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը և թողարկման տարեթիվը՝ «2012»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինանշանը և «Հայրենիք» շքանշանը, որը շնորհվում է «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչման արժանացած անձանց: Եզրագծով՝ «ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿ» մակագրությունն է:

Հուշադրամի հեղինակն է Հարություն Սամուելյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը.

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Զանգվածը	33,6 գ
Տրամագծային չափը	40,0 մմ (ութանկյուն)
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

«Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակ» (արծաթ)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր արծաթե հուշադրամ՝ նվիրված Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Օրբելու հնագիտական արշավանքի չափագրումներից գծագիր, Էրմիտաժի արծաթյա ցուցանմուշներ և գրառումով քարե սալիկ՝ Աղթամար կղզուց: Հուշադրամի վերևի աջ մասում թողարկման տարեթիվն է՝ «2012», ներքևի մասում անվանական արժեքը՝ «1000 դրամ» և ամբողջ եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը:

Հուշադրամի դարձերեսի աջ մասում Օրբելու դիմապատկերն է, ձախ մասում՝ Անիի 1910 թ. հնագիտական արշավանքի ցուցանմուշ՝ կարաս: Վերևի մասում՝ «125 ամյակ» և ներքևի մասում՝ «ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ JOSEPH ORBELI 1887 1961» մակագրություններն են:

Հուշադրամի հեղինակն է Վարդան Վարդանյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Զանգվածը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

“Հայ գրքի տպագրության 500-ամյակ” (արծաթ)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը շրջանառության մեջ է մտցրել նոր արծաթե հուշադրամ՝ նվիրված հայ գրքի տպագրության 500-ամյակին:

Հուշադրամի դիմերեսին պատկերված են «Երևանը Գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների պատկերանիշը և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2012»: Ներքևի մասում անվանական արժեքն է՝ «1000 դրամ» և եզրագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Վենետիկի տեսարաններից մեկը, առաջին հրատարակիչ Հակոբ Մեղապարտի նշանադրոշմը, «Ուրբաթագիրքը» և գրքից մի պատկեր՝ «Հիվանդի այցը»: Ձախ կողմում, ուղղահայաց՝ «Ուրբաթագիրք» գրառումն է, իսկ աջ եզրագծով՝ «ՀԱՅ ԳՐՔԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿ» մակագրությունը:

Հուշադրամի պատրաստման համար օգտագործվել են գունավոր ներկեր:

Հուշադրամի և գունազարդ բուկլետի հեղինակն է Վարդան Վարդանյանը: Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Դրամաշուրթը	ատամնավոր
Որակը	պրուֆ
Տպաքանակը	500 հատ

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն
հեռ/ֆաքս. 56 37 61
էլ-փոստ. mcba@cba.am
www.cba.am